

յէլեան կտակի շուրջ յարուցուած բոլոր խոչընդոտները: Այս մասին արդէն Ս. Ղազարու վարչութիւնը անընդհատ հետապնդումի մէջ էր՝ ամենէն աւելի փորձ ու կենցաղագէտ միաբաններուն ձեռքով:

Պատմութեան ծանօթ է, որ Բարերարին մահէն յետոյ անոր երէց որդին Աղեքսանդր կը մաշեցնէր Միթարեան վարդապետներուն ազգանուէր սրտերը՝ կտակին իրագործման շուրջ իր յարափոփոխ գիտաւորութեամբ և աննպաստ տրամադրութիւններովը: Չենք ուզեր երկարել զայս. ըսենք սակայն, որ մի միայն Ս. Ղազարու Դիւանին ծանօթ է այն տառապանքը՝ զոր կրած է վշտաշարժար Արքահայր Գերպ. Սոմալեան, հանդերձ իր գործակից վարչութեամբ ու պատուիրակներովը: Յուսոյ ամէն մէկ նոր նշոյլի երեւման՝ մէջտեղ կը գտնենք դպրոցավայրի համար նոր անուն մը: 1789 Դեկտ. 31-ին գրուած Ռափայէլեան կտակին մէջ՝ դպրոցատեղւոյ ընտրութեան մասին որոշ կարգադրութիւն մը չէր եղած, ինչպէս էր Մուրատեանին ալ: Դիտենք որ կատարուելէ վերջ կտակին պայմաններէն մին՝ այն է Ռուէնի «Պատմ. Հոովմէական» ի տպագրութիւնը՝ անմիջապէս յաջորդ տարին (1816 Սեպտ. 28) Հ. Յարութիւն Ազեբեան երկիցս Փատուա կ'երթայ «ի խնդիր տեղւոյ Ռափայէլեան դպրատան, զոր խոստանայր Պարոնն կանգնել» (այնչապէս «Կենցաղ Հ. Յար. Վ. Ս. Ազեբե», էջ 172): Իսկ Լոնտրայի մէջ Ազեբեանի բարեկամ երաշխաւորը Պ. Մէքօլի, ինչպէս առաջ հաղորդած էր առարկութիւններ (Անդ, 241-4-5)՝ այժմ եւս կը հաղորդէ իննիս գործակալին կողմանէ (Անդ, էջ 254), թէ «Բնտ կարծեաց Պարոն Գօպրնի դպրատունն Ռափայէլեան պարտի հաստատիլ ի Մատրաս, զի բաց ի լռութենէ կտակին զտեղւոյ նորա, քաջ զիտակ էր այլն կամաց պարոն Ռափայէլի առ կենդանութեամբ նորա վան կանգնելոյ զդպրատունն իւր ի Մատրաս յօգուտ քաղաքակցաց իւրոց», ինչպէս մեկնել ուզած էին նաեւ Բարերարին դուստրը և փեսայն. (տես Թեոդոր. «Պատմ. Մ. Վ. ի», էջ 46): Որքան որ ասոր դէմ կը պատասխանէ Ազեբեան, թէ Հ. Բուզայեան «լաւ եւս գիտէր զմիտս նորա, ապա թէ ոչ ինքն չառնոյր յանձն զվերակացութիւն նորին ի Հնդկիս և ոչ իսկ յանձնէր ապա Միաբանութեան վենետիկոյ» («Կենց. Հ. Յ. Վ. ի. Ազեբե», էջ 254), բայց այս յայտնի է՝ որ մերթ ընդ մերթ իրարու կը յաջորդեն Ռափայէլեանց կողմանէ այսպէս Մատրաս, Փատուա, Լոնտոն, Փարիզ և այլ անուններ: Կը տեսնենք նաեւ Պոլսոյ մասին նամակ մը Սոմալեան Արքահայրէն առ Հ. Անանիա Ճելալեան.

«Չգիտեմ թէ լուեալ իցէ քո այդր թէ Պարոնն կամի երեկօթիւք դպրոց կանգնել այդր յիւր անուն, և յիւրոց սեփական գոյից ի հրահանգս ազգային մանկուոյն ընդ մերովս դարձեալ վերակացութեամբ: Զայսմանէ զրեաց մեզ Հ. Աղեքսանդրն ի Լոնտրայէ, և մեք գովեցաք զբարիոց գիտաւորութիւն Պարոնին, և պատուէր տուաք ջանալ արդիւնացուցանել զնոյն վաղ ընդ փոյթ գործադրութեամբն: Արդ զի այս այսպէս (թէպէտ ո՛չ յոյժ վստահելի ինչ), և զի զորոշ ինչ ընդ քեզ արարից առ այժմ ի վերայ անցելոց զրելոցս սակաւ դպրոցիդ որ արդ ընդ ձեռամբ քով, կարգէ Հասարակութիւնս վասն այդր ամ ըստ ամէ 1000 հազար ցըվանցիկ, զորոյ զկէսն առնուլ ունիս այդր ո՛չ կանխիկ, այլ ի լրանալ վեցից դպրոցական ամսոց, և զայլն յաւարտ միւսոյ վեց ամսեանն» (գր. 1833 Օգոստոս 28):

Հուսկ Հ. Աղեքսանդր Պէշիկթաշլեանի կը վիճակի առաջին անգամ առաջարկել վենետիկ քաղաքը թէ Պարոնին և թէ իր եղբարց, քաջ պատճառաբանութեամբ մը համոզելով զիրենք՝ ընդդէմ հակառակորդ փաստաբանին, զոր և կը հաղորդէ յետոյ առ Արքահայրը. (Նմկ. 1834 Յունուար 17):

Բնականաբար մեծապէս կը հրճուի Գերպ. Սոմալեանի հայրական սիրտը՝ յետ այնքան տառապանքի տարիներուն: